

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՍԱՓՈՐՁ ՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՆ

Հայութեան դժբախտութիւններէն թերեւս մեծագոյնը ուրոյն պետական մտածողութեան երկա՛ր բացակայութիւնն է իր ազգային կեանքին մէջ: Հայաստանի բաժան-բաժան ըլլալու իրողութիւնը, պետական տարբեր կառոյցներու այլեւայլ պարտադրանքներն ու պայմանադրումները այլասերած էին հայուն պայծառ մտածողութիւնը, քաղաքական ինքնատպուութիւնը: Առաւելագոյն պարագային, հայկական պետութեան բացակայութեան հետեւանքով, հայութեան ծոցէն պարագայաբար դուրս եկան մատի վրայ համրուող դէմքեր, որոնք ծառայեցին իրենց երկրի վարչամեքենային դէմ: Ուրիշ խօսքով, պետական փորձառութիւն ունեցող դէմքեր ունեցած ենք, բայց երբեք ի վիճակի չենք եղած հայ պետական մտածողութիւն առաջացնել եւ զայն զարգացնել:

Արդ, պետական մտածողութիւնը մոգական գաւազանով չի քանդակուիր, ոչ ալ կը ձեւաւորուի կարճ ժամանակամիջոցին: Երկարաշունչ եւ կուտակուող աշխատանք է. անխուսափելի են ժամանակի եւ տարածութեան ազդակներով պայմանաւորումն ու անոնց ճամբով ուրոյն մտածողութեան զարգացումը: Առ այդ, Հայաստանի Հանրապետութեան հռչակումով հայ քաղաքական միտքը լուրջ եւ աննախատեսելի հետեւանքներով յղի կացութիւն մը կը դիմագրաւէր, մա՛նաւանդ բնականոն պայմաններու մէջ չէր, որ կը ծնէր Հայաստանի պետականութիւնը: Տեսակէտներն ու կարծիքները՝ այս մարտահրաւէրը յաղթանակելու, կը տարբերէին, մինչեւ իսկ գաղափարական շեղումներու գծով արտայայտութիւններ եւ վերագրումներ կ'ըլլային թէ՛ ներկուսակցական եւ թէ՛ ներ-խորհրդարանական հանդիպումներու կամ ժողովներու ընթացքին: Ինչ ալ ըլլան պարզուած մտածումներու բախումներուն չափը եւ ուժգնութիւնը, իրականութիւնը ա՛յն է, որ Հայաստանի Հանրապետութիւնը որդեգրեց եւ գործադրեց ժամանակուան չափանիշով ամէնէն յառաջդիմական-ժողովրդավարական սկզբունքներն ու ըմբռնումները: Թէ որքանո՞վ կեանքի իրականութեանը բխող եւ անոր պատշաճող գործելաձեւ էր, կը մնայ վիճելի հարցադրում մը:

Ա.) ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբեր 1917ին, դէպքերու գահավէժ ընթացքին բերումով, Ազգային Համագումարին կողմէ ընտրուած Ազգային Խորհուրդը փաստօրէն իր ուսերուն բեռնուց հայ ժողովուրդի գերագոյն ղեկավարութեան պատասխանատուութիւնը:

Ազգային Խորհուրդի կազմը բաղկացնող անդամներու կուսակցական պատկանելիութիւնը յստակ կը դարձնէր, որ կուսակցական համախոհութեամբ ստեղծուած «իրողական դահլիճ»ը կը վայելէր կուսակցութիւններու անվերապահ աջակցութիւնը: Ժամանակակիցներէն ոմանք արդարօրէն Ազգային Խորհուրդը կը ներկայացնէին իբրեւ կուսակցութեանց խառն (coalition) դահլիճ:

Ազգային Խորհուրդին անդամ էին՝ Արամ (դաշնակցական), Ա. Ահարոնեան (դաշն.), Ռ. Տէր Մինասեան (դաշն.), Բ. Բարաբախեան (դաշն.), Խ. Կարճիկեան (դաշն.), Ն. Աղբալեան (դաշն.), Ս. Յարութիւնեան (ժողովրդական), Մ. Պապաջանեան (ժող.), Ե. Տէր Օհանեան (սոցիալ-յեղափոխական), Ա. Ստամպուլցեան (սոց.-յեղ.), Ղ. Տէր Ղազարեան (սոց.-դեմ.), Մ. Ղարաբէգեան (սոց.-դեմ.), Ստ. Մամիկոնեան (անկուսակցական), Տ. Բէգլարեան (անկուս.) եւ Պ. Զաքարեան (անկուս.):

Բացայայտ է, որ Անդրկովկասի հայութեան ծոցին մէջ գործող կուսակցական բոլոր հոսանքները ունէին իրենց ներկայացուցիչները: Այս երեւոյթը ինքնին կազմեց Հայաստանի Հանրապետութեան ապագայ կառավարութեան ժողովրդավարական սկզբունքներուն մէկ մանրանկարը՝ թէեւ նեղ շրջագիծի տիպարով: Ծակատագրական այդ օրերուն, երբ հայութիւնը մնացած էր անտէր-անտիրական, թրքական եւ թաթարական յարձակումներն ու թիկունքային հարուածները դամոկլեան սուրի մահասարսուռ



վախն ու սարսափը կը տարածէին հայութեան սիրտին մէջ... Աննկարագրելի դժուարութիւններով յատկանշուող հայոց նորագոյն պատմութեան այդ ժամանակաշրջանի ազգային, ընկերատնտեսա-քաղաքական ղեկավարումի պատասխանատուութիւնը ամբողջութեամբ կը ծանրանար, Ռուբէնի բառերով, հայկական, բայց ոչ Հայաստանի առաջին կառավարութեան ուսերուն վրայ: 28 Մայիս 1918ին, Անդրկովկասի Միութեան քայքայման հետեւանքով, Ազգային Խորհուրդը ստանձնեց «Հայկական գաւառներու գերագոյն իշխանութիւնը»:

9 Յունիսին Ազգային Խորհուրդը կ'որոշէր միջ-կուսակցական հիմունքով կառավարութիւն կազմել եւ այդ պարտականութիւնը կը վստահէր Յովհաննէս Քաջազնունիին: Այս հիմունքով կառավարութիւն կազմելը բնական պիտի թուի, երբ նկատի ունենանք, որ պատերազմական մաշեցնող հեւքը հազիւ աւարտած էր եւ արիւնաքամ հայութիւնը հազիւ իր կենսական ապրուստը ճարելու մտահոգութիւնը կ'ապրէր: Ակնկալել, որ անբնական պայմաններուն մէջ բնական կեանքի յատուկ կարգադրութիւններ ըլլային, քիչ թէ շատ առողջ դատողութեամբ շարժող միտքի տէր անհատներուն՝ ատիկա անբնական եւ անտրամաբանական պիտի թուէր... Արդ, Ազգային Խորհուրդի կառավարութիւն կազմելու նախաձեռնութիւնը, եթէ պահանջուած նպատակայարմարութիւնը չունէր, բայց ունէր գործնական մօտեցումի մը ամէն տուեալ. որդեգրուած մեկնակէտը ընդունելի էր նոյնիսկ ամէնէն ծայրայեղականներուն կողմէ:

Հայաստանի Հանրապետութեան առաջին օրէնսդիր մարմինի (խորհրդարան)՝ Հայաստանի Խորհուրդ անունով, կազմուածութեան ձեւին մասին, Միմոն Վրացեան կը գրէ. «Թիֆլիսի եւ Երեւանի Ազգային խորհուրդների մի շարք խառն միատեքում վերջնական ձև ստացան Ազգային Խորհուրդն ու կառավարութիւնը: Որոշուեց, հակառակ ժողովրդականների բուռն, եռապատկելի Ազգային Խորհուրդի անդամներու թիւը եւ հրաւիրել այլազգիների՝ թուրքերի, եգիպտացիների ու ռուսների ներկայացուցիչներին» («Հայաստանի Հանրապետութիւն», Բ. տպ. էջ 172):

Ինչպէս կը տեսնուի, առաջին օրէն իսկ կարելի բոլոր կողմերը կամ ազգային հատուածները ներկայացնող պետական մարմին մը առաջացնելու ձգտումը փաստացի արտայայտութիւն կը գտնէ:

Սոցիալ-դեմոկրատ պատգամաւորներու ձեռնպահութեամբ Հայաստանի Խորհուրդը նախագահ կ'ընտրէ Աւետիք Սահակեանը (դաշն.)՝ ծանօթ Հայր Աբրահամ ծածկանունով, փոխ-նախագահներ՝ Գր. Տէր Խայատուրեան (ժողովրդական) և Գր. Տէր Խայատուրեան (ժողովրդական):

յեղ․), առաջին քարտուղար՝ Պ․ Չաքարեանը (անկուս․), երկրորդ քարտուղար՝ Ե․ Սարգիսեանը (դաշն․)։ Իսկ Հայաստանի Սորհուրդը՝ խորհրդարանը 1 Օգոստոս 1918ին կը բաղկանար 42 ներկայացուցիչէ (երեսփոխան), ըստ Արտաշէս Բաբալեանին («Էջեր՝ Հայաստանի անկախութեան պատմութիւնից», Գահիրէ, 1959, էջ 43), իսկ ըստ Ռ․ Յովհաննիսեանին՝ աւելի քան 46 ներկայացուցիչէ։ Ըստ առաջինին, դաշնակցականներ՝ 18, սոցիալ-դեմոկրատներ, սոցիալիստ-յեղափոխականներ եւ ժողովրդականներ՝ ճական իւրաքանչիւրը, թուրքեր՝ 3, ռուս՝ 1 եւ չէզոքներ՝ 2։ Մինչ Ռ․ Յովհաննիսեան կու տայ հետեւեալ բնական պատկերը, — դաշնակցականներ՝ 18, սոցիալ-դեմոկրատ, սոցիալիստ յեղափոխականներ, ժողովրդականներ՝ ճական իւրաքանչիւրը, իսլամներ՝ 6, եզիտ՝ 1, ռուս՝ 1, ռուս կատէղներ եւ ռամկավարներ։ Այս վերջինները իբրեւ ազգային փոքրամասնութիւններու պատգամաւորներ (Dimensions of Democracy and Authority in Caucasian Armenia, 1917-1920, «The Russian Review», էջ 40)։ Վերի վարոյ համեմատական ներկայացուցչութիւնը կը համապատասխանէ իրարու։

Տակաւին, կառավարութիւնը հազիւ կազմուած էր, Ազգային Սորհուրդը 3 Դեկտեմբեր 1918ին Ա․ Ահարոնեանը կը նշանակէր Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ, որ Փարիզի խորհրդաժողովին պիտի մասնակցէր։ Եւ որպէսզի չհակասէ կառավարութեան միախառն բնոյթին, պատուիրակութեան երկրորդ անդամ կը նշանակուի Միքայէլ Պապաջանեան (ժող․)։ Այս երկուքին վրայ կ'աւելնային Համօ Օհանջանեան, Տիգրան Միրզոյեան (դաշն․)՝ իբրեւ Ա․ քարտուղար, Զօր․ Գարրիէլ Ղորղանեան՝ զինուորական խորհրդատու եւ Արտեմ Փիրալեան՝ մասնագէտ վիճակագրութեան եւ տնտեսագիտութեան (ժող․)։

Վերոյիշեալ կազմերը ցոյց կու տան օրուան դաշնակցական թէ միւս կուսակցութեանց ղեկավարութեան նախանձախնդրութիւնը՝ ժողովրդավարական սկզբունքներուն անշեղ գործադրման տեսակէտէն։ Անտարակոյս, գտնուած են բարձր մակարդակի պատասխանատու դէմքեր, որոնք ընդունելով հանդերձ ժողովրդավարական սկզբունքները, անգործնական եւ անիրապաշտ կը զբոսնէին տիրող պատերազմական պայմաններուն մէջ։ Այս մտածողութեան տէր անհատներուն համար, հարկը օրէնքը կը լուծէր։ Կարծէք, պետական կառոյցը այդ ձեւով անհրաժեշտ արագաշարժութեանն եւ կտրուկ միջոցառումներով վտանգները կանխելու յատկութեանն ինքզինք կը զրկէր, որովհետեւ մեքենան այնքան դանդաղ կը գործէր, որ ժամանակը ի զուր կը վատնուէր․ եւ այդ պայմաններուն մէջ որքա՛ն թանկ էր ժամանակը․․․։

Առաջին կառավարութեան, այսինքն՝ դաշլիճին վարչապետն էր Յովհաննէս Քաջազնունին, ներքին գործերու, հաղորդակցութեան, հանրային կրթութեան եւ խնամատարութեան նախարար՝ Արամ Մանուկեան, արտաքին գործոց նախարար՝ Ալեքսանդր Սատիսեան, զինուորական նախարար՝ Զօր․ Յովհաննէս Հախվերտեան, ելեւմտական նախարար՝ Պաշիկ Կարծիկեան եւ արդարութեան նախարար՝ Գրիգոր Պետրոսեան։ Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ դաշլիճը կազմուած էր դաշնակցականներէ եւ անկուսակցականներէ (թիւով՝ 2)։ Լ․ Յ․ Դաշնակցութիւնը կը փորձէր դաշլիճին կազմին մէջ առնել նաեւ միւս կուսակցութիւններէն ներկայացուցիչներ, որովհետեւ նախ՝ ազգի ճակատագրի ճշման ծանրակշիռ պատասխանատուութիւնը չէր ցանկար առանձինն ստանձնել, երկրորդ՝ կը խուսափէր միակուսակցական իշխանութիւն հաստատելէ, երրորդ՝ անհրաժեշտ էր նաեւ միւս կուսակցութիւններու ներկայութիւնը՝ դաշլիճին մէջ, առաւելագոյն ուժերու օգտագործումը ապահովելու ձգտումէն առաջնորդուած, ինչպէս նաեւ՝ դաշնակիցներու մօտ վստահութիւն չհասնելու նպատակով։ Հակառակ թափուած ջանքերուն, միախառն դաշլիճ առաջացնելու փորձերը ձախողեցան։

Հոկտեմբեր 1918ին ժողովրդական կուսակցութեան բանագնացներ Սամսոն Յարութիւնեան (դատախազ) եւ Մինաս Պէրպէրեան համաձայնութիւն գոյացուցին Լ․ Յ․ Դաշնակցութեան հետ՝ վերակազմելու դաշլիճը։ 4 Նոյեմբերին դարձեալ Յովհաննէս Քաջազնունիի վարչապետութեամբ վերակազմուեցաւ դաշլիճը․ արտաքին գործոց նախարար՝ Միրական Տիգրանեան (դաշն․), ներքին գործոց նախարար՝ Արամ Մանուկեան (դաշն․), զինուորական նախարար՝ Զօր․ Յովհաննէս Հախվերտեան (անկուս․), խնամատարութեան նախարար՝ Պաշիկ (Պաշատուր) Կարծիկեան (դաշն․), արդարադատութեան նախարար՝ Սամսոն Յարութիւնեան (ժող․), հանրային կրթութեան նախարար՝ Միքայէլ Աթաթեան (ժող․)․ ելեւմտական նախարար՝ Արտաշէս Էնֆիատեան

(ժող․), պարենաւորման նախարար՝ Լեւոն Ղուկեան (ժող․)։ Իսկ Հայաստանի Սորհուրդի կողմէ պետական վերահսկիչ՝ Մինաս Պէրպէրեան (ժող․)։ Աթաթեանն ու Ղուկեանը յաջորդաբար փոխարինուեցան Գէորգ Մելիք-Գարակէօզեանով (ժող․) եւ Քրիտափոր Վերմիշեանով (ժող․), իսկ Արամի մահէն եւ Կարծիկեան սպանութենէն ետք, յաջորդաբար նշանակուեցան Ալ․ Սատիսեան եւ Սահակ Թորոսեան։ Յունուար 1919ին մեռաւ նաեւ Մինաս Պէրպէրեան։

Բ․) ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՊԱՀՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջին դաշլիճին մէջ բացարձակ մեծամասնութիւն չկառմանց համար այս կացութիւնը դաշլիճը վերածած էր դանդաղ շարժ քառանկիւնի մը, որ միշտ թիւրիմացութիւններու եւ հասկացողութիւններու տեղիք տուաւ։ Օրուան պայմանները համեմատած՝ սովի եւ անօթութեան ստեղծած հրատապ խնդիրներ անհրաժեշտ դարձանները չէին գտներ, նաեւ այն պատճառով՝ եղան նախարարներ, որոնք հազիւ նշանակուած՝ այս կամ ահիմնաւորումով հեռացան Երեւանէն, վերստին չվերադառնալ պայմանով։ Նոր նշանակումներ եղան նաեւ մահացողները փոխարինելու համար (թիւով՝ 3)։ Վստահաբար, արեւմտեան տիրապետութեան եւ ժողովրդավարութեան սկզբունքները կապելու եւ զանոնք Հայաստանի անկայուն կացութեան պատշաճեցնել փորձելով, ստեղծուեցաւ «անբնական» մթնոլորտ մը, որով պատրաստ չէր ժողովուրդը՝ ընդհանրապէս։

Առաջին դաշլիճի գլխաւոր պարտաւորութիւնը, ինչպէս Քաջազնունի կը յայտարարէր իր դաշլիճի ծրագրի ներկայումս ատեն, պետութեան մը գլխաւոր կառոյցներն ու հիմքերը առաջացնել էր, որովհետեւ ամէն ինչ կը սկսէր գրեթէ ոչինչէ Գերմարդկային ճիգ եւ բացառիկ նուիրում կը պահանջէին ծրագրուած աշխատանքները։ Թիֆլիսի կեանքի պայմաններուն մապրած եւ ապրող հայ մտաւորականութեան եւ ղեկավարութեան համար գրաւիչ չէին այդ աշխատանքներու տեղական կարելիութիւններն ու ընկերային կեանքը։

Այս ընդհանուր յոռետեսութեան առընթեր, պետութիւն մարտահրաւէր կը կարդար երեք ճակատի վրայ․

ա) Ամէնէն կարճ ժամանակամիջոցին յաղթահարել սովի համաճարակի վտանգը, որպէսզի 300,000 հաշուող գաղթականութիւնը կեանքի նուազագոյն հնարաւորութիւնները ունենայ՝ գյուղութիւնը ապահովելու, ինքզինք կազդուրելու, ապա՝ շէնցնելու հայրենիքը։

բ) Լուծել փոքրամասնութիւններու բարդ խնդիրը։ Յակապէս թուրք եւ թաթար փոքրամասնութիւնները չէին ճանչնու Երեւանի կառավարութեան իշխանութիւնը եւ կը փորձէին զէնք դիմադրել պետական ամէն տեսակ հակակշիռի։

գ) Օգտագործել ամէն կարելիութիւն եւ հնարաւորութիւն մ'անաւանդ մարդուժը, որուն այնքան պահանջը կը զգացուէր որ օրերուն։ Առանց գաղափարական, քաղաքական եւ կուսակցական նկատառումներու, Հայաստանի Հանրապետութիւնը անխտիր լորին առջեւ լայն բացաւ իր դուռները։

Անկասկած, պետութեան առջեւ կային բազմաթիւ այլ հարցեր, որոնք անմիջական լուծումի կը սպասէին։ Մեր կատարած թուումը ի մտի ունի ժողովրդավարութեան անոնց ուղղակի անուղղակի առնչութիւնը։

Վերոյիշեալ երրորդ կէտին պարագային, Լ․ Յ․ Դաշնակցութեան համար, թերեւս, ընդունելի չէր կրնար ըլլալ միակուսակցական գունաւորումով պետութեան մը հաստատումը, որովհետեւ յստակօրէն ոտնակոխած կ'ըլլար իր իսկ դաւանանքն ու յեղափոխական իր առողջ տրամաբանութիւնը։

Սկզբունքային իմաստով, ոչ մէկ դաշնակցական դէմ կրնա ըլլալ ժողովրդավարութեան կիրարկման։ Տարակարծութիւնը, եթէ կը պատահի, անոր ժամանակի եւ չափի նպատակայարմարութեամբ սին կրնայ ըլլալ։ Տարրական, բայց շատ պարզ տրամաբանութիւնն անգամ գիտէ, թէ ժողովրդավարական կառոյցներ կեանք կոչելու նախապայմանը ժողովուրդ ունենալն է։ Տակաւին, չեն խօսիր այդ ժողովուրդի կեանքի կենսական նախապայմաններու մասին․ արդեօք առողջ է ժողովուրդի ֆիզիքականը, արդեօք երկիրը պատերազմի մէջ է, թէ խաղաղ եւ բնականոն պայմաններուն, եւայլն։ Հարցադրումներ են, որոնք սուր կերպով յաճախ կը բխին իրարու, կը հրմշտկեն զիրար։ Մէկ բան յստակ է սակայն։ Ժողովրդավարութիւնը կը յաջողի, եթէ (հիմնական պայման մը, անշուշտ) երկրի ազգաբնակչութիւնը կազմող խմբա-

րուճները հաւասարապէս պատրաստ են որդեգրելու զայն եւ այդ հիմամբ յարաբերելու իրարու հետ:

Յովհաննէս Քաջազնունիի դահլիճին գծով, Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Հորիզոն» կը գրէր. «Հայ դեմոկրատիայի եւ բուրժուազիայի կռաւիցիան էր, որ ստեղծուեց» («Հայաստանի Հանրապետութիւն», Ս. Վ., էջ 198): Իսկ ժողովրդական կուսակցութեան պաշտօնաթերթ «Ժողովուրդ»ը, իր 4 Յունիսի թիւով, կը բանաձեւէր հետեւեալը.

«Միացեալ Հայաստանի պետական իշխանութիւնը պիտի կազմակերպուի Փարիզի գործադիր մարմնի եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան փոխադարձ համաձայնութեամբ: Պիտի ստեղծուի մի ժամանակաւոր խառն (coalition) կառավարութիւն, որը պիտի գումարի Միացեալ Հայաստանի հիմնադիր ժողով, կամ պարլամենտ (խորհրդարան), եթէ մինչ այդ մշակուած լինի երկրի սահմանադրութիւնը: Ուրիշ կերպ լուծել Միացեալ Հայաստանի իշխանութեան պրոբլեմը (հարցը, խնդիրը) անկարելի է, քանի որ Հայաստանի երկու մասերը միմեծի ալժմ գտնուել են տարբեր քաղաքական եւ տնտեսական պայմաններում եւ ապրել են տարբեր կուլտուրական (մշակութային) կեանքով» («Հայաստանի Հանրապետութիւն», Ս. Վ., էջ 266-267, փակագիծով բացատրութիւնները աւելցուցած ենք մենք):

Այս պահանջ-պայմանը կը մերժուի Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ: Այս մերժումին վրայ, 24 Յունիսին, ժողովրդական չորս նախարարները՝ Ս. Յարութիւնեան, Ս. Էնֆիատեան, Յ. Մելիք-Քարակէօզեան եւ Քր. Վերմիշեան կը հրաժարին կառավարութեանէն:

Գ.) ԸՆԴՀԱՆՍՈՒՅՈՒՄԻՆԵՐԸ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայաստանի Հանրապետութեան մէջ օրինական ձեւով կը գործէին Հ. Յ. Դաշնակցութիւնը, Հայ ժողովրդական կուսակցութիւնը, Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը, Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնը: Այս վերջինը գրեթէ միշտ մնաց ընդդիմադիրի դերին մէջ: Առաջին երկուքը եւ, մա՛նաւանդ՝ առաջինը, եղան կառավարական կուսակցութիւններ, այն իմաստով, որ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան առաջին ամիսներուն միասնաբար համաձայնեցան կազմել միախառն դահլիճ եւ իրար մէջ բաժնել պետական պատասխանատուութիւնները:

Սոցիալիստ-յեղափոխականները մնացին միակ ընդդիմադիրները, որոնք խաղաղ եւ պետական միջոցներով տարին իրենց ընդդիմադիրի դերը՝ թէ՛ նորընտիր խորհրդարանին եւ թէ՛ տեղական ինքնավարութիւններուն մէջ: Այդ ընդդիմադրութիւնը շարունակեցին մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը:

Սոցիալ-դեմոկրատները իրենց ընդդիմութիւնը երբեմն ժխտականօրէն արտայայտեցին, յատկապէս խորհրդարանական ընտրութիւններուն ատեն, երբ մերժեցին մասնակցիլ ընտրութիւններուն, նախազգալով, որ կրնան կորսնցնել ընտրութիւնները եւ, իբրեւ կուսակցութիւն, իրենց վարկը խնդրոյ առարկայ դարձնել:

Հարկ է ընդգծել, որ այն ժամանակ, երբ կեդրոնական Ռուսաստան, Վրաստան եւ Ատրպէյճան ո՛չ միայն տեղ չէին տար համայնավարներու իրենց երկիրներուն մէջ, այլեւ կը հալածէին զանոնք, Հայաստանի Հանրապետութիւնը այդ «անընդունելի» տարրերը կ'ընդունէր իր հողամասին վրայ: Աւելի՛ն. հաւատալով եւ խորապէս համոզուելով խօսքի եւ միտքի անկաշկանդ եւ ազատ արտայայտութեան, պետական պաշտօններ վստահեցաւ անոնց, խոստում առնելով, որ պետութեան դէմ խափանարարական ընթացքի մէջ պիտի չգտնուին: (Այս խոստումը լաւապէս յարգուեցաւ Մայիսեան ապստամբութեամբ...):

Հայաստանի խորհրդարանին մէջ ամէնէն ձախակողմեան հակումներ ունեցող խմբակցութիւնը ներկայացուցին սոցիալ-դեմոկրատները: Թէ՛ ժողովրդականները եւ թէ՛ սոցիալիստ-յեղափոխականները որդեգրեցին պատասխանատու եւ, կարելի է ըսել՝ շինիչ կեցուածք. կառավարութեան եւ ընդդիմադիր այս խմբակցութիւններուն մէջ տեսակէտներու եւ մտեցումներու նշելի տարբերութիւններ չեղան, խորհրդարանի իրաւասութիւններու, կառավարական եւ օրէնսդրական մարմինի յարաբերութիւններու վերաբերմամբ, ինչպէս կը յայտնէ Արշամ Նոնդկարեան («Վէմ», Բ. Տարի, թիւ 3, 1934, «Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում», էջ 59):

Այլ ձեւի ընդդիմադրութեան երեւոյթ էր նաեւ Արամի «դիկտատոր»ի հանգամանքին դէմ ընդվզումը: Երիտասարդ դաշնակցականներ՝ բոլորուած «Ձանգու» թերթի շուրջ, հակաժողովրդավարական կը գտնէին Արամի «մենատիրութիւնը»: Կուսակցական ժողովներու մէջ բուռն կերպով կը քննադատէին Արամի ոչ-ժողովրդավար սկզբունքներն ու անոր վարած «աջ» քաղաքականութիւնը:

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան դիտել կու տայ, որ «Ամբիֆի» պայմաններում քարելաւումով եւ ֆիզիքական պայմաններու ապահովումով գաղափարական մրցակցութիւնները սկսան ցցուիլ կուսակցութիւններում միջեւ: Դաշինքի մէջ կուսակցական բաժանումները ընթացիկ դարձած էին, քէեւ միասնականութիւն կը փորձուէր պահուիլ մինչեւ ուշ Ապրիլ 1919, երբ դաշնակցական վարչապետ Յ. Քաջազնունի եւ ժողովրդական ելեւմտական մախարար Էմֆիատեան առաքելութեամբ մը մեկնեցան Եւրոպա»:

Դ.) ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս յիշած էինք քիչ վերը, կառավարական դահլիճն ու խորհրդարանը միջ-կուսակցական փոխադարձ համաձայնութեամբ առաջացուած էին՝ անմիջական եւ հրատապ պահանջներուն գոհացում տալու մեկնակէտով: Քաղաքական պայմաններու հարկադրանքն էր առաւելաբար, որ հնարաւոր չէր դարձուցած ժողովրդային կամքին դիմելու եւ ըստ այնմ կազմելու դահլիճն ու խորհրդարանը:

Կառավարութիւնը խորհրդարանական ընտրութեանց օրէնքը որդեգրեց 12 Մարտ 1919ին: Այդ օրէնքը հիմք կ'ընդունէր համառուսական Սահմանադրական ժողովի ընտրական օրէնքը, ներառեալ Անդրկովկասի Առանձին Կոմիտէի մտցուցած փոփոխութիւնները, որոնք ամբողջ երկիրը ընտրական մէկ շրջանի կը վերածէին: Այս հիմունքով, կը մշակուի «Օրէնք՝ Հայաստանի խորհրդարանի ընտրութիւններու», 20 տարիքը լրացուցած իւրաքանչիւր քաղաքացի, առանց սեռի, կրօնի կամ ցեղի խտրութեան իրաւունք ունի մասնակցելու ընտրութիւններուն: Սա իրատեւք կու տար նաեւ թրքահայ գաղթական-քնակիչներուն եւ թուրք փոքրամասնութիւններուն: Այդ ընտրութիւնները պիտի կատարուէին ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի եւ համեմատական սկզբունքով:

խորհրդարանի նախատեսուած 80 անդամի ընտրութիւնները վարելու համար ստեղծուած էին կեդրոնական, գաւառական, շրջանային, քաղաքային, գիւղական եւ թաղամասային ընտրական յանձնաժողովներ: Այլ խօսքով՝ կը յարգուէին ժողովրդավարական տարրական սկզբունքները եւ կը փորձուէր հասնիլ իւրաքանչիւր ընտրողին: Հայաստանի դահլիճը նշանակած էր կեդրոնական յանձնաժողովը, իսկ մնացեալները՝ իրենց գերադասներուն կողմէ:

Ընտրական նախապատրաստական եւ ցուցակագրական աշխատանքները սկսան 25 Ապրիլին: Ընտրական ձեւականութիւնները եւ կուսակցական կամ այլ թեկնածուներու յայտարարութեան ժամկէտ ճշդուեցաւ Մայիսէն Յունիս: Իւրաքանչիւր թեկնածուի համակիր խմբակները ընտրապայքար կը տանին, շրջելով գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, որպէսզի իրենց թեկնածուներու գործունէութեան ընդհանուր գիծերը պարզեն ժողովուրդին եւ ատով իսկ՝ սիրաշահին ժողովրդային խաւերու համակրանքն ու վստահութիւնը: Իւրաքանչիւրը ունէր իր կարգախօսը: «Հ. Յ. Դաշնակցութիւնը իշխանութիւնը՝ աշխատաւոր ժողովրդին», «Հողը՝ աշխատաւորին», «Գործը՝ գործազուրկին», «Հայ ժողովրդին», «Ժողովուրդներին համերաշխութիւն եւ եղբայրութիւն» («Հայաստանի Հանրապետութիւն», Ս. Վրացեան, էջ 278):

20 Յունիսին ժողովրդականները ընտրութիւնները պոյ-ֆոքի ենթարկեցին: Նոյնպէս՝ սոցիալ-դեմոկրատները: Իսկ բուշեիկներու «Սպարտակ» երիտասարդութիւնը Երեւանի մէջ ընտրութիւնները ձախողեցնելու համար թուցիկ բաժնեց եւ որմնազդ փակցուց պատերու վրայ: Ընտրութիւններուն մասնակցեցան Հ. Յ. Դաշնակցութիւնը, սոցիալիստ-յեղափոխականները, անկախ գիւղացիներու միութիւնը, փոքրամասնութիւնները:

21-23 Յունիս 1919ին, առաջին ընտրութեան 365,000 ընտրողներուն մօտաւորապէս 75 առ հարիւրը, որ մօտաւորապէս կը հաշուէ 260,000 ընտրող, Հ. Յ. Դաշնակցութեան կ'ապահովէր ձայներու 80 առ հարիւրը, մինչ սոցիալիստ-յեղափոխականները կ'ապահովէին...

Դաշնակցական Ֆրակցիային մէջ կային 13 արեւմտահայ եւ 3 կին երեսփոխաններ: Այդ օրերու չափանիշով իգական սեռի ներկայացուցիչ ունենալու երեւոյթը ժողովրդավարական բաւական զգալի յառաջդիմութիւն կարելի է սեպել, երբ նկատի ունենանք այն իրողութիւնը, որ արեւմտեան աշխարհին մէջ այնքան ալ անխտրական չէին ընտրական օրէնքները:

Նորընտիր խորհրդարանը իր առաջին ժողովը գումարեց 1 Օգոստոս 1919ին: 7 Օգոստոսին վարչապետ ընտրուեցաւ Ալ. Ռատիսեան, որուն առաջին աշխատանքը եղաւ կազմել խորհրդարանական 12 յանձնաժողովները, որոնց մաս կազմեցին բոլոր պատգամաւորները:

Ե.) ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Յովհանէս Քաջազնունիի առաջին դաշլիճի կազմութենէն որոշ ատեն մը ետք, յստակ հարց դարձան պետութեան եւ կուսակցութեան յարաբերութիւնները, իւրաքանչիւրին իրաւասութեան սահմանները, իւրաքանչիւրին առաքելութիւնը, իշխանութիւնը եւ հեղինակութիւնը ներկայացնելու կամ մարմնաւորելու իրաւական պատասխանատուութիւնը եւայլն: Ըստ Քաջազնունիին եւ իրեն պէս մտածողներուն, պետութենէն պէտք է անջատել կուսակցութիւնը եւ գերագոյն իշխանութիւնը կը պատկանի պետութեան: Այս հիմնաւորումով, դաշլիճի դաշնակցական անդամները պատասխանատու պիտի ըլլան դաշնակցական Ֆրակցիային եւ ոչ թէ ուղղակի Հ.Յ.Դ. Բիւրոյին: Քաջազնունիի տեսակէտները ունեցող էր Ալ. Ռատիսեան: Այս մտածողութիւնը չէին բաժնոր, չըսելու համար անոր կը հակադրուէին, կարգ մը քաղաքական դէմքեր, որոնց մէջ ամէնէն երեւելին Ռուբէն փաշան էր: Ասոնք վնասակար կը գտնէին հանդարտ, դանդաղ խորհրդարանական ընթացքը եւ անոր փոխարէն կը պահանջէին յեղափոխական գործելաձեւի գործադրում. սուր տարակարծութիւններն ու հակադիր կարծիքները իրենց ամբողջ մերկութեամբ բացայայտուեցան իսլամական հարցին առնչութեամբ:

Ալ. Ռատիսեանի կառավարութեան շրջանին, ոչ-կուսակցականներ մուտք գործեցին նախարարութիւններու մէջ, որովհետեւ ընդունման չափանիշը տաղանդն ու փորձառութիւնն էին: Ռատիսեան յաջողեցաւ հաւասարակշռութիւնը պահել կուսակցութեան եւ պետութեան միջեւ: Իր օրով, պետական-կառավարական բաժանմունքները աւելի եւ աւելի անկախացան կուսակցութենէն: Նախարարական խորհուրդը՝ դաշլիճը հաշուետու էր խորհրդարանին: խորհրդարանը, որ 4 կուսակցութիւններու ներկայացուցիչներէն կը բաղկանար, միայն 18 45ի վրայ կը պատկանի Հ.Յ.Դաշնակցութեան: Ո՛չ ժողովրդական եւ ոչ ալ սոցիալ-դեմոկրատ կար խորհրդարանին մէջ: Իսկ Դաշնակցութիւնն ալ ակնկալուած մեծամասնութիւնը չէր կազմեր. 1 Օգոստոս 1919 - 12 Յունուար 1920 աւելի քան 20 երեսփոխան դուրսն էր:

Ռատիսեանի վարչապետութեան ժամանակ յստակացաւ, որ պետութիւն եւ կուսակցութիւն հոմանիշներ չեն: Դաշլիճի եւ կուսակցութեան կապն ալ ճշդուեցաւ. դաշլիճը պատասխանատու է խորհրդարանին առջեւ, այս վերջինը՝ դաշնակցական Ֆրակցիային, իսկ Ֆրակցիան, իր կարգին՝ Հ.Յ.Դ. Բիւրոյին: Սեպտեմբեր 1919ին, Երեւանի մէջ, Հ.Յ.Դ. Գրգ. Ընդհ. ժողովը վերջնականապէս լուծեց այս հարցը, երբ որոշեց՝ ա) յստակ բաժանումը պետութեան եւ կուսակցութեան միջեւ եւ բ) շարունակ միաժամանակ անդամակցութիւնը Հ.Յ.Դ. Բիւրոյին եւ դաշլիճին: Իսկ 20 Սեպտեմբեր 1919ին, խորհրդարանը վաւերացուց օրէնք մը, որ դաշլիճի անդամը կը կորսնցնէ իր ձայնը խորհրդարանին մէջ:

Հ.Յ. Դաշնակցութիւնը փորձեց եւ, այդ կապակցութեամբ, անհրաժեշտ զիջումներն ալ կատարեց, որպէսզի խուսափի միակուսակցական պետական վարչամեքենայի մը ստեղծումէն: Իր յեղափոխական դաւանանքին եւ աշխարհահայեացքին էապէս դէմ էին հակաժողովրդավարական գործելաձեւն ու սկզբունքները: Ատոր համար, եւ այս շատ բնականօրէն եւ հասկնալի, կուսակցութիւնը ստորադասեց պետութենէն, արտօնելով միաժամանակ այլ կուսակցութիւններու գործունէութիւնը:

Զ.) ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ԳՈՐԾՆԱՊԷՍ

Թերեւս ամէնէն աննկատ եւ բեմաբազմ փոփոխութեամբ միայն արժեւորուող իրագործումը՝ պետական պաշտօններու ուսերէնը հայերէնի վերածելն է Անշուշտ, առ ի երեւոյթ կրնայ այդ տպաւորութիւնը ձգել, բայց ատոր երկացաշունչ արձագանքներն ու

ստեղծած առիթները (այլ խօսքով՝ միայն ուսերէն գիտցողներու մենաշնորհը ըլլալու «իրաւունք»ի քանդումը) դուռերը լայն բացին ամէն խաւի պատկանող անհատներու առջեւ, այսինքն՝ ժողովրդավարացման առաջին պայմանի լրացում: Վստահարար, այս չի նշանակեր, որ ամէն անհատ ամէն տեսակի պաշտօն, գործ կամ առաքելութիւն պիտի ստանձնէ: Հիմնականը այն էր, որ պետական կամ ոչ-պետական պաշտօնները՝ լեզուական պայմանադրումով, ձեռնտու պիտի ըլլային ԲՈՒՄԻՆ՝ անխտիր:

Ապրիլ 1919ին կառավարութիւնը որոշեց հայերէնի փոխել նախարարութիւններու պետական լեզուն: Նախ՝ արտաքին նախարարութիւնը, ապա միւս նախարարութիւնները, բացի զինուորական նախարարութենէն եւ սպայակոյտէն, որոնք մինչեւ Հանրապետութեան վերջին ամիսները ուսերէնով շարունակեցին իրենց յարաբերութիւնները:

Կարելի չէ պատկերացնել, որ պետական կեդրոնացեալ դրութեամբ առողջ եւ իրաւ ժողովրդավարութիւն մը կեանքի առօրեայ արտայայտութեան վերածուի: Վարչամեքենայի ապակեդրոնացումը անհրաժեշտ նախապայման է, որպէսզի առոյգ եւ ժողովրդավարական հիմքով գործունէութիւններ տարուին եւ առաւելագոյնս արդիւնաւորուին: Այս ծիրին մէջ, գործող քաղաքապետութիւններ էին՝ Նախիջեւան, Օրտուպատ, Կարս, Ալեքսանդրապոլ: Պետութիւնը Հանրապետութիւնը բաժնեց տասը նոր շրջաններու: Աւելցան Էջմիածինի, Դիլիջանի, Աշտարակի, Իգտիրի, Կուլպի, Ղարաբաղի, Ծալալօղլիի եւ Ռամարուի շրջանները՝ զանոնք քաղաքի վերածելով: Ներքին գործոց նախարար Արրահամ Գիւլխանդանեանի օրով, ինքնավար շրջաններու հաստատումը կարելի է նկատել ամէնէն յատկանշական քայլը՝ առնուած ապակեդրոնացման ճամբուն վրայ: 1918ի վերջաւորութեան խորհրդարանը, իսկ Մայիս 1919ին Դաշլիճը օրէնքներ վաւերացուցին, որոնք կը ճշդէին ինքնավար շրջանները, ինչպէս Երեւանի գաւառը, նաեւ՝ Էջմիածին, Սուրմալու, Ալեքսանդրապոլ, Դիլիջան, Նոր Պայազիտ եւ Դարալագեազ: Այսպէս, շրջանային ինքնավարութիւնը, իշխանութեան քաղաքապետութիւններ եւ գիւղական հիմնարկներ փոխանցումը կ'ամրապնդեն ժողովրդավարութիւնը եւ կը նուազեցնեն դիւանակալութեան ժխտական հետեւանքները: Երկիրը բաժնուած էր 4 նահանգապետութեանց:

Հոկտեմբեր 1919ին, Երեւանի քաղաքապետ Մկրտիչ Մուսինեան նախապատրաստեց քաղաքներու միութեան օրէնքները: 4 Յունուար 1920ին, Երեւանի մէջ տեղի ունեցաւ հայկական քաղաքներու առաջին համագումարը, որ վաւերացուց Մուսինեանի նախագիծը (Հոկտ. 1919ի): Նոյն ատեն, ինքնավար շրջաններու առաջին ընտրութիւնները տեղի ունեցան՝ Երեւանի, Էջմիածնի եւ Ալեքսանդրապոլի գաւառներուն մէջ: Այս ընտրութիւններուն մասնակցեցան Դաշնակցութիւնը, ժողովրդական, Սոցիալիստ-յեղափոխական, Սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւններն ու գիւղական զանազան խմբակցութիւնները:

Ալ. Ռատիսեանի դաշլիճը փորձեց ձերբազատիլ ցարական դիւանակալական ձեւերէն: Այս փորձին անդրադառնալով, փրոֆ. Ռիչըրտ Յովհաննիսեան կը գրէ, որ դաշլիճը, իր նպատակին հասնելու համար, ընդլայնեց ժողովրդային ժողովրդավարութիւնը համագործակցականներու եւ տեղական կառավարական գործակատարներու ճամբով, ձեռնարկեց հողային բարենորոգումներու, ազգայնացուց մեծ կալուածները, նուազեցուց անուղղակի տուրքերը եւ որդեգրեց եկամուտի յառաջատուական տուրքի դրութիւնը:

1918ի սկիզբը կը գործէին աւելի քան 200 սպառողական համագործակցականներ, որոնք ունէին 50,000 անդամ: Թրքական ներխուժումին պատճառով, այդ հսկայ ցանցը փուլ եկաւ: Պետութիւնը ուժ տուաւ համագործակցականի շարժումին. վերակազմուեցան Շիրակի Միութիւնը, Լոռի նահանգի, Երեւանի, Էջմիածինի, Նոր Պայազիտի եւ Սուրմալուի համագործակցական-

ԱՍՏՈՒԱՅԻՆ ԵՒ ԳՈՐԱՆԱՅԻՆ ՆՈՐՈՅԹ
ԱՐԱՆՑ ԿԱԳՈՒՍՏԵՂԵՆՆԵՐ
PERSONNA
Պուրճ Լամոսի Քաղաքապետարանի հրապարակ, հեռ. 264311

ները: Կազմուեցաւ Հայ Համագործակցականը (Հայ Կօօպը), որ կը շեշտէր աշխատաւոր խաւի շարժում ըլլալուն վրայ:

Պետութիւնը զարկ տուաւ ժողովրդային կրթութեան եւ ջանաց մօտէն հետաքրքրուիլ ժողովուրդի ուսումնական մակարդակով: Օրինակ, 1919ին կառավարութեան միացեալ զուտ եկամուտը կը հաշուէր 30 միլիոն ուրբի, մինչդեռ ծախսերը կ'անցնէին մէկ միլիառ ուրբին: Հակառակ այս լայն բացին, 23 միլիոն ուրբի յատկացուած էր կրթական նախարարութեան. մինչդեռ արդարադատութեան եւ արտաքին գործոց նախարարութիւններուն՝ ընդհանուր ծախսին 1 առ հարիւրը, իսկ դաշխիճին՝ 3 առ հարիւրը: Յետոյ, Հայաստանի Հանրապետութեան մէջ, դպրոցը պետութեան մենաշնորհը չէր: Իւրաքանչիւր հասարակական կամ համայնական կազմակերպութիւն, խմբակցութիւն, ընկերակցութիւն կամ առանձին անհատ իրաւունք ունի դպրոց բանալու եւ զայն վարելու իր սեփական միջոցներով:

Ինչ կը վերաբերի դատական դրութեան, նորաստեղծ պետութիւնը ամէն ճիգ գործ դրաւ, կազմակերպելու համար Հայաստանի պետական եւ հաւաքական կեանքը՝ եւրոպական յառաջդէմ եւ ժողովրդավար երկիրներու հետեւութեամբ: Յովհաննէս Քաջազնունիի դաշխիճի արդարադատութեան նախարար Սամսոն Յարութիւնեան նախաձեռնեց Հայաստանի դատական դրութեան վերակազմութեան. մինչ այդ կը գործադրուէր ցարական իշխանութեան արդարադատութեան դրութիւնը: 1864ին Ռուսաստանի միջնադարեան դատական դրութիւնը բարեփոխուեցաւ, սակայն, այդ բարեփոխումէն զերծ մնաց Կովկասը: Յարութիւնեան մշակեց քաղաքային, քրէական եւ վարչական բարեփոխուած օրէնքներ: Ան կեանքի կոչեց դատարանները, Վերադատ ատեանը եւ երդուեալներու դրութիւնը: Հայաստանի արդի արդարադատութեան վերնաշէնքը պիտի կազմէր Վճռաբեկ (դատաստանական ատեան) եւ Գերագոյն ատեաններու ստեղծումը: Այս ուղղութեամբ վաւերացուած օրէնքը մնաց մեռեալ տառ եւ երբեք հնարաւոր չեղաւ զայն գործադրել:

1920ի Մայիսեան ապստամբութեան հետ աղերս ունեցող հակապետական արարքներու հեղինակները դատելու համար, կառավարութիւնը առաջացուց նաեւ արտակարգ պայմաններու յատուկ դատարաններ՝ Պատերազմական ատեան եւ քաղաքացիական արտակարգ դատարաններ:

Արդարադատութեան նախարարութիւնը ստեղծեց 10 նահանգային դատարաններ: Իսկ դատավարութեան ընթացքին միշտ հետամուտ եղած էր յարգելու դատապարտեալի դաւանութեան ծէսը՝ երդման պահուն: Ասիկա փոքրամասնութեանց իրաւասութիւնները բծախնդրօրէն յարգելու եւ գործադրելու բացայայտ մէկ ապացոյցն էր: Վերջապէս, դատարանի հայացումն ու ժողովրդականացումը, ինչպէս նաեւ օրէնքի խիստ եւ արդար պարտադրումը յատկանշեցին պետութիւնը արդարադատութեամբ եւ անխտրական ոգիով հարցերը ընկալելու եւ անոնց լուծումներ տալու մօտեցումով: Հակառակ կարծուածին, երդուեալ դատաւորներու հիմնարկութիւնը արագօրէն ժողովրդականութիւն ստացաւ:

Կ'արժէ անդրադառնալ մամուլի կատարեալ ազատութեան, որ Հայաստանի Հանրապետութեան ժամանակ լիովին կը յարգուէր: Լոյս կը տեսնէին Դաշնակցութեան օրաթերթ «Յառաջ»ը, Սոցիալիստ-յեղափոխականներու թերթը, ժողովրդական կուսակցութեան «Ժողովուրդ» թերթը, մինչեւ իսկ բոլշեւիկ Արշալիր Մելիքեանի պարագայբար հրատարակած բոլշեւիկեան թերթ մը: Կը հրատարակուէին նաեւ արեւմտահայ բարբառով (դաշնակցական եւ ռամկավար) թերթեր:

Խօսքի, մտածումի եւ գաղափարի լայն ազատութիւն կը վայելէր մամուլը, քննադատութիւններ անպակաս էին, որոնց համար պետական հետապնդումներու չէին ենթարկուեր քննադատող գրիչները:

Մայիսեան խռովութիւնները պատճառ դարձան Բիւրօ-կառավարութեան կազմութեան: 5 Մայիսին Ալ. Խատիսեանի դաշխիճը հրաժարեցաւ: Վարչապետ Համօ Օհանջանեանի դաշխիճը առկախեց քաղաքային ազատութիւնները, ստիպողական վիճակ հռչակեց եւ խռովարարներու կեդրոնը՝ Ալեքսանդրապոլ ուղարկեց բանակը՝ կարգ ու կանոնը վերահաստատելու համար: Բիւրօ-կառավարութիւնը ժամանակաւոր պարտադրանքն էր քաղաքական պայմաններու գահավէժ ընթացքին: Խռովութիւնները վերջ գտնելէ ետք, բնականոն կեանքի վերադարձաւ պետութիւնը:

Այս գրութեամբ՝ ժողովրդավարական սկզբունքները...

գործադրման եղանակն ու չափը արժեւորելու փորձ մը չէր մեր նպատակադրումը. նման աշխատանք մը կը պահանջէ օրուան քաղաքական, տնտեսական եւ ընկերային պայմաններու սերտողութիւնը եւ, առ այդ՝ անոնց պարզած համընդհանուր պատկերացումին լոյսին տակ համապատասխան գնահատում:

Այս ընդհանրական ներկայացումը հազիւ նախաճաշակ մը կրնայ ըլլալ Հայաստանի Հանրապետութեան օրերուն որդեգրուած եւ գործադրուած ժողովրդավարական սկզբունքներուն մասին: Մէկ բան անառարկելի է սակայն: Հաւասարութեան եւ արդարութեան կարգախօսներէն անդին անցնելով, Հանրապետական Հայաստանը ամէն ճիգ գործ դրաւ՝ իշխանութիւնը ծառայեցնելու ժողովուրդին եւ սատարելու անոր տագնապներու բարուք լուծման:

Թէ որքանով նպատակայարմար է պետութեան այս գործելաձեւը, կը մնայ քննարկումի առանձին, բայց յոյժ կարեւոր հարց մը, որուն պատկերացում-լուծումներու մասին պէտք է խորհրդածէ քաղաքականացած միտքի տէր իւրաքանչիւր հայ անհատ՝ առանց նախապաշարումի եւ կանխատրամադրութեան:

Մէկ բան յստակ է, որ իտէլապաշտ-վերացապաշտ եւ իրապաշտ-գործնապաշտ մտածելակերպերու բախումը միշտ պիտի յամենայ քաղաքական վիճելի հարցադրումներու պարագային:

Կազմեց՝
Գ. ԱՉԼԳԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

- 1) «Հայաստանի Հանրապետութիւնը», Ս. Վրացեան, Բ. տպ. 1958, Մշակ տպարան, էջ 680:
- 2) «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», Ալ. Խատիսեան, Բ. տպ., 1968, «Համազգային» տպարան, 485 էջ:
- 3) «Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից», քժ. Արտ. Բարալեան, 1959, «Յուսարեք» տպարան, էջ 55:
- 4) «The Russian Review», «Dimensions of Democracy and Authority in Caucasian Armenia, 1917-1920», Prof. Richard G. Hovannisian, pp 37-49.
- 5) «Հայաստանի Խորհուրդի հաստատած օրէնքները, (1918, 1919 եւ 1920)»:
- 6) «The Republic of Armenia, 1918-19», Richard G. Hovannisian, Vol. I, University of California Press, 1971, pp. 547.
- 7) «The Republic of Armenia, 1919-20», Richard G. Hovannisian, Vol. II, University of California Press, 1982, pp. 603.
- 8) «Օպորդիցիան Հանրապետական Հայաստանում» (յօդուածաշարք), Արշամ Խոնդկարեան, «Վէժ», Ա. Տարի, թիւ 1, Սեպտ.-Հոկտ. 1933, էջ 63-83:
- 9) «Դատարանը Հայաստանի Հանրապետութեան մէջ» (յօդուածաշարք), Վարդգէս Ահարոնեան, «Հայրենիք» ամսագիր, Ժ. Տարի, թիւ 7 (Մայիս), 1939, էջ 126-130:
- 10) «Արամը», Ս. Թորոսեան, «Հայրենիք» ամսագիր, ԻԹ. Տարի, թիւ 10 (Հոկտ.), 1951, էջ 1-13:
- 11) «Հանրապետութեան օրերուն Ալ. Խատիսեանի շրջանը» (յօդուածաշարք), Ս. Թորոսեան, «Հայրենիք» ամսագիր, Լ. Տարի, թիւ 8 (Օգոստ.), 1952, էջ 44-50:
- 12) «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Ռուբէն, է. հատոր, Համազգայինի «Վ. Սէթեան» տպարան, 1979, էջ 147-176:

ՓՈՔՐԵՐՈՐ, ԿԱՆԱՆՅ ԵՒ ԱՐԱՆՅ
ՆՈՐԱԶԵՒ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆՆԵՐ
Ճ Ի Ր Ա Կ
 ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ԿԱԾԱՌԵ
 ԱՐԱՐԱՍ ԳՐԱԳՐԱՐԱՆ